Արձանագրություն N 2

2024 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիկ

ք. Երևան «31» «Հոկտեմբերի» 2023թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 22.09.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հոկտեմբերի 11-ին ժամը 11:00-ին: 2023 թվականի հոկտեմբերի 11-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Արփիմեդ» ՍՊԸ	info@arpimed.com	03519299
2	«Թեոֆարմա ԻՄպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
3	«Ագաստ» ՍՊԸ	agastllc@mail.ru	00435781
4	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	tender@mlnpharm.am	02567316

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Իսկ մնացած առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Արփիմեդ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման՝ մասնավորապես 3-րդ չափաբաժնի համար պետք է շտկել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցվեց մասնակցին շտկում անելու մասին՝

«Ագաստ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 3-րդ չափաբաժինի մասով շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի հստակ անվանումը: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժինի մասով՝ «Վալպրոաթթվի նատրիումական աղ 300 մգ աղելույծ» դեղի ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական նկարագիրը) ներբեռնվել է էլեկտրոնային աճուրդ համակարգ և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Առաջին տեղը զբաղեցրած մյուս մասնակիցներ «Արփիմեդ» և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ների հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին և գնահատվում են բավարար:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքը՝ 5-րդ չափաբաժնի՝ «Էտասուքսեմիդ 250 մգ» դեղը չգրանցված է, «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքը՝ 3-րդ չափաբաժնի՝ «Վալպրոաթթվի նատրիումական աղ 300 մգ աղելույծ» դեղը ներկայացված է և գրանցված տարբերակով և չգրանցված և քանի որ սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջները՝ համաձայն նշված որոշման 2.2 կետի՝ «Թեոֆարմա Իմպորտ» և «Ագաստ» ՍՊԸ-ները պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ, չգրանցված դեղերի համար պարտադիր պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին: Տեղեկանքը ներկայացնելուց հետո, պայմանագրերը կնքելուց վերջիններումս կներառվեն այն դեղերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 11.10.2023թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1. «Արփիմեդ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով
2. «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով:
3. «Ագաստ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝
   - «Արփիմեդ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ 358,976,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով, 212,849,997.60 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Ագաստ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով, 74,280,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 4-րդ չափաբաժնի մասով՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:
4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ սահմանել 01.11.2023թ.-ից մինչև 10.11.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով՝ 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով 11.10.23թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Արփիմեդ» ՍՊԸ					«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Մետֆորմին հ/ք 1000մգ	20,000,000	10.27	205,400,000	171,166,667	34,233,333	205,400,000	8.56	10.27			0	0.00	0.00
2	Գլիմեպիրիդ/Մետֆորմին 2մգ/500մգ	9,720,000	15.80	153,576,000	127,980,000.00	25,596,000.00	153,576,000	13.17	15.80			0	0.00	0.00
3	Վալպրոաթթվի նատրիումական աղ 300 մգ աղելույծ	1,684,260	54.64	92,027,966.40			0	0.00	0.00			0.0	0.00	0.00
4	Սոմատրոպին լուծույթ լուծույթ ե/մ ներարկման 6,7մգ/մլ; 1,5մլ նախալցված գրիչ-ներարկիչ	3,000	39,513.60	118,540,800			0	0.00	0.00			0.0	0.00	0.00
5	Էտասուքսեմիդ 250 մգ	225,000	954.67	214,800,750			0	0.00	0.00	177,374,998	35,474,999.6	212,849,997.6	788.33	946.00

2024 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով 11.10.23թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Ագաստ» ՍՊԸ					«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Մետֆորմին հ/ք 1000մգ	20,000,000	10.27	205,400,000										
2	Գլիմեպիրիդ/Մետֆորմին 2մգ/500մգ	9,720,000	15.80	153,576,000										
3	Վալպրոաթթվի նատրիումական աղ 300 մգ աղելույծ	1,684,260	54.64	92,027,966.40	61,900,000	12,380,000.0	74,280,000.0	36.75	44.10	63,000,000	12,600,000.0	75,600,000.0	37.41	44.89
4	Սոմատրոպին լուծույթ լուծույթ ե/մ ներարկման 6,7մգ/մլ; 1,5մլ նախալցված գրիչ-ներարկիչ	3,000	39,513.60	118,540,800										
5	Էտասուքսեմիդ 250 մգ	225,000	954.67	214,800,750										